# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2016 թվականի N 899 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհրդի տարեկան համաժողովին և հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստին մասնակցելու նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 6-9-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Վաշինգտոն), ինչպես նաև «Հայաստան ներդրումային համաժողով 2016» համաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 9-13-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) գործուղել պատվիրակություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1 և 2 հավելվածների:

2. Վաչե Գաբրիելյանի, Վարդան Արամյանի, Հովհաննես Ազիզյանի և Ռաֆայել Ավետիսյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

3. Գարեգին Մելքոնյանի, Արթուր Առաքելյանի, Հայկ Հարությունյանի, Արմեն Հարությունյանի և Սերգեյ Խաչատրյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Աշոտ Հովակիմյանի, Ռոբերտ Հարությունյանի և Արման Հակոբյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

5. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Արթուր Ջավադյանի, Ներսես Երիցյանի և Անդրանիկ Գրիգորյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցների հաշվին.

2) Վահան Մարտիրոսյանի և Արման Խաչատրյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարին՝ գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղումների արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թ. հոկտեմբերի 3
Երևան

899v.voroshum

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2016 թ.
հոկտեմբերի 3 -ի N 899 - Ա
որոշման

# Կ Ա Զ Մ

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-9-Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ՎԱՇԻՆԳՏՈՆ) ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

| | |
|---|---|
| Վ. Գաբրիելյան | - ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար (պատվիրակության ղեկավար) |
| Վ. Արամյան | - ՀՀ ֆինանսների նախարար |
| Ա. Ջավադյան | - ՀՀ կենտրոնական բանկի նախագահ (համաձայնությամբ) |
| Գ. Մելքոնյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Ա. Հարությունյան | - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| Հ. Հարությունյան | - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| Ա. Հովակիմյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ |
| Ն. Երիցյան | - ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ) |
| Հ. Ազիզյան | - ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի գլխավոր խորհրդական |
| Ռ. Ավետիսյան | - ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի խորհրդական |
| Ա. Հակոբյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի Ամերիկայի վարչության պետ |
| Ա. Գրիգորյան | - ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կայունության և զարգացման վարչության պետ (համաձայնությամբ) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2016 թ.
հոկտեմբերի 3 –ի N 899 - Ա
որոշման

# Կ Ա Զ Մ

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-13-Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ՆՅՈՒ ՅՈՐՔ) ՄԵԿՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

| | |
|---|---|
| Վ. Գաբրիելյան | - ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար (պատվիրակության ղեկավար) |
| Վ. Արամյան | - ՀՀ ֆինանսների նախարար |
| Վ. Մարտիրոսյան | - ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Ա. Առաքելյան | - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ |
| Գ. Մելքոնյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ |
| Ս. Խաչատրյան | - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ |
| Ա. Հարությունյան | - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ |
| Ռ. Հարությունյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ |
| Հ. Հարությունյան | - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| Ն. Երիցյան | - ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ (համաձայնությամբ) |
| Ա. Խաչատրյան | - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի գլխավոր խորհրդական |
| Ռ. Ավետիսյան | - ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի խորհրդական |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ